ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 60-Լ «20» 12 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 24-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի.

1) Ստեղծել նոր բաժիններ՝

ա. Արվեստի և գրահրատարակչության ոլորտի քաղաքականության մշակման բաժին,

բ. Արվեստի և գրահրատարակչության ոլորտի ծրագրերի իրականացման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 24-Լ հրամանը:

12/20/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀկրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2024 թ. «--------» ---------- N-------հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է,
2. Վարչությունն անմիջականորեն հաշվետու է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ՝ Նախարար):
3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության նորմատիվ ու իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում /փոփոխում/ է Նախարարը:
5. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:
6. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:
7. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչություն:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության նպատակն է ժամանակակից արվեստի, գրահրատարակչության (երաժշտարվեստ, թատերարվեստ, պարարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ, ստեղծարար ոլորտ, ստեղծարար արդյունաբերություն, գրահրատարակչական գործ) և մշակութային կրթության ոլորտների (այսուհետ՝ Ոլորտ) զարգացումը, տարածումը և ծառայությունների որակի բարձրացումը:
9. Վարչության խնդիրներն են.
   1) Նպաստել Ոլորտում իրականացվող քաղաքականության վերլուծությանը, միջազգային միտումների և օրինաչափությունների ուսումնասիրմանը,
   2) Մշակել Ոլորտի պետական մշակութային քաղաքականության նպատակներից և գերակայություններից ռազմավարություններ, հայեցակարգեր և դրանցից բխող նպատակային ծրագրեր և նախագծեր,
   3) ստեղծել ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմաններ՝ ժամանակակից արվեստի բոլոր ուղղություններին հաղորդակցվելու համար,
   4) նպաստել գրահրատարակչության ոլորտում նորարարական տեխնոլոգիա-ների ներդրմանը և հայ ժամանակակից գրողների ճանաչելիության բարձրացմանը,

5) նպաստել Ոլորտում նոր ծրագրերի, նոր գաղափարների իրականացմանը. նոր ծրագրերի, ստեղծարար նախաձեռնությունների ապահովմանը,
6) նպաստել գրական դաշտի բոլոր օղակների հավասարաչափ զարգացմանը, գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանը, տարածմանը և հանրհռչակմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը,
7) աջակցել թարգմանական աշխատանքներին, մշակութաբանական հետազոտություններին, գրականության և գրաքննադատության նախագծերին, խթանել նշանակալի, մնայուն և հանրօգուտ աշխատանքների ստեղծումը, որն էլ իր հերթին կնպաստի գրականության և հասարակական գիտությունների զարգացմանը,
8) աջակցել ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող տպագիր և էլեկտրոնային պարբերականների գործունեությանը՝ այդ կերպ խթանելով փոքրամասնությունների ազգային լեզվի, բանահյուսության, մշակույթի, ավանդույթների պահպանումը,
9) աջակցել գրական և մշակութային պարբերականներին ազգային-քաղաքակրթական արժեքների տարածմանը, հայ մշակույթի ավանդույթների և նոր ձեռքբերումների արժևորմանը, ժամանակակից ստեղծագործական մոտեցումների զարգացմանը,
10) խթանել ընթերցանությունը, իրականացնել գրականության հանրահռչակ-մանը միտված հանրապետական և միջազգային գրական ծրագրեր, կազմակերպել գրքի միջազգային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցությունը,
11) ապահովել տեսողության սահմանափակ կարողություն ունեցող անձանց մշակութային կրթության, տեղեկատվություն ստանալու իրավունքը բրայլյան տառատեսակով գրքերի տպագրության, աուդիոգրքերի ձայնագրման և այլ միջոցներով,

12) հրատարակել Հայաստանի և հայկական մշակութային ժառանգությունը ներկայացնող օտարալեզու գրականություն՝ այդ գրքերով համալրելով արտերկրի կարևորագույն գրադարանները:
13) ապահովել միջազգային համագործակցության և միջազգային կոնվենցիաների շրջանակներում հայ ժամանակակից արվեստի հանրահռչակումը,
14) միջազգայնացնել հայ դասական և ժամանակակից գրականությունը՝ աջակցելով արտերկրի այն հրատարակչություններին, որոնք պատրաստակամ են իրենց երկրում օտար լեզվով հրատարակել հայ գրականություն:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Վարչությունն իր լիազորությունների շրջանակում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ըստ բաժինների.

10.1. Արվեստի և գրահրատարակչության ոլորտի քաղաքականության մշակման բաժին.

1) Մշակում է օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ռազմավարություններ և հայեցակարգեր, ինչպես նաև Նախարարին և Գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ արվեստի, գրահրատարակչության և մշակութային կրթության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ, ապահովում իրավական ակտերի կիրարկումը,
2) պետական մշակութային քաղաքականության իրականացման նպատակով մասնակցում է իր համակարգման Ոլորտի ՊՈԱԿ-ների (թատերահամերգային, մշակութային կրթություն իրականացնող կազմակերպություններ, կինոստուդիա, կինոկենտրոն, մշակույթի և ժամանցի կենտրոն) (այսուհետ՝ ՊՈԱԿ-ներ) սոցիալ-

տնտեսական զարգացման տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակմանը,

3) մշակում է պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրեր, առանձին միջոցառումներ, նպաստում դրանց իրականացմանը,
4) մասնակցում է Հայաստանի Հանրապետության տարեկան բյուջեի նախագծի մշակմանը,
5) ներկայացնում է առաջարկներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի գրահրատարակչության ոլորտի մասով միջնաժամկետ և տարեկան պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,
6) ապահովում է Ոլորտի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները, առաջարկություններ ներկայացնում դրա կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի և կարգերի բարելավման վերաբերյալ,
7) իրականացնում է ՊՈԱԿ-ների համակարգումը, ոչ ֆինանսական ցուցանիշների ու արտադրական գործունեության փաստաթղթային ուսումնասիրություններ և վերլուծություններ.
8) մշակում է ՊՈԱԿ-ների հետ կնքվող դրամաշնորհի, պետության կողմից ուսանողական նպաստների տրամադրման մասին տարեկան պայմանագրերի բովանդակային դրույթները.
9) մշակում է Հայաստանի Հանրապետության տարածքում հյուրախաղային և ցուցա-հանդեսային գործունեության ընդլայնմանը, ստեղծագործական խմբերի, մշակութային, կրթական կազմակերպությունների միջև տարածաշրջանային համագործակցության ստեղծմանն ու զարգացմանը նպաստող ծրագրեր.
10) ներկայացնում է առաջարկներ Ոլորտի մասնագետների պատրաստման, վերապատրաստման, վերաորակավորման վերաբերյալ.
11) մշակում է Ոլորտի բնագավառում պետական կրթական չափորոշիչներ, մեթոդական ուղեցույցներ,

12) ներկայացնում է առաջարկություններ մշակույթի բնագավառում իրենց վաստակով նշանավոր անձանց և արվեստագետներին պետական պարգևների, ինչպես նախարարության պարգևների վերաբերյալ,

13) ուսումնասիրում և վերլուծում է ՊՈԱԿ-ների ստեղծագործական գործունեության տարեկան հաշվետվությունները, կազմում եզրակացություններ,

14) ներկայացնում առաջարկություններ պետական կազմակերպություններ ստեղծելու, վերակազմակերպելու և իր ենթակայությանը հանձնված պետական կազմակերպությունները պատմական, հասարակական-քաղաքական, մշակույթի, արվեստի, գիտության նշանավոր գործիչների և անձանց անուններով կոչելու վերաբերյալ,

15) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ իրականացնում է պետական մշակութային տարածքային քաղաքականությունը,

16) նպաստում է Հայաստանի Հանրապետությունում գործող ստեղծագործական խմբերի, ստեղծագործող անհատների և միջազգային մշակութային կազմակերպությունների միջև համագործակցության, կապերի և փոխանակումների ստեղծմանն ու զարգացմանը,

17) մասնակցում է միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակմանը, ապահովում միջազգային պարտավորությունների կատարումը ժամանակակից արվեստի և գրահրատարակչության բնագավառում,

18) ապահովում է մեթոդական, տեղեկատվական, վերլուծական և այլ բնույթի նյութերի հրապարակումը՝ ժամանակակից արվեստի և մշակութային կրթության բնագավառներում՝ պետական նպատակային ծրագրերին համապատասխան.

19) մշակութային քաղաքականության ապահովման նպատակով մասնակցում է պետական միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը,

20) ապահովում է գրականության, գրքի և գրահրատարակչության բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման

միտումները, առաջարկություններ ներկայացնում դրա կառավարման սկզբունքների և իրականացման ձևերի վերաբերյալ,

21) մշակում է գրքի, տպագիր արտադրանքի և հրատարակչական գործի զարգացման ծրագրեր,

22) ներկայացնում է առաջարկներ Նախարարին գրող - գրական մամուլ - գրական գործակալ – հրատարակիչ – գրավաճառ - ընթերցող շղթայի ամրացմանն ուղղված նախաձեռնությունների վերաբերյալ,

23) գործակցում է արտերկրի հրատարակչությունների և մշակութային կազ-մակերպությունների հետ՝ հայ գրականությունը թարգմանաբար հանրայնացնելու համար,

24) համագործակցում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան օտարերկրյա պետությունների գրահրատարակչության բնագավառի լիազոր պետական մարմինների հետ, մասնակցում է գրահրատարակչության բնագավառի միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,

25) միջոցներ է ձեռնարկում Հայաստանի և հայկական մշակութային ժառանգությունը ներկայացնող, արվեստի դասական արժեքները հանրայնացնող գրականություն հրատարակելու համար,

26) մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավո-րություններից բխող մշակութային բազմազանության և ժամանակակից արվեստի ու ստեղծարար ոլորտին առնչվող Հայաստանի ազգային զեկույցների պատրաստմանը, ներկայացնում է առաջարկություններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանական տարեթվերի ցանկում ընդգրկելու և նմանատիպ այլ կարևոր նախաձեռնություններին Հայաստանի մասնակցության վերաբերյալ,

27) կազմակերպում և համակարգում է մասնագիտական խորհուրդների և հանձնաժողովների աշխատանքները, մշակում աշխատակարգեր, կազմում արձանագրություններ,

28) մշակում է Նախարարության կողմից այլ գերատեսչություններին և կազմակերպություններին ներկայացվող ոլորտային տեղեկանքների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախագծեր,

29) ապահովում է ժամանակակից արվեստի և գրահրատարակչության ոլորտներում հատուկ նպատակներով ստեղծված և Նախարարին կից գործող խորհուրդների և հանձնաժողովների աշխատանքը,

30) մշակում է ժամանակակից արվեստի և գրահրատարակչության բնագավառում մասնագետների պաշտոնական պարտականությունների բնութագրերը,

31) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

10.2. Արվեստի և գրահրատարակչության ոլորտի ծրագրերի իրականացման բաժին.

1) մասնակցում է ժամանակակից արվեստի և գրահրատարակչության ոլորտներում Նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային ծրագրերի մրցույթների իրականացմանը,

2) ամփոփում է ժամանակակից արվեստի և գրահրատարակչության ոլորտներում ստեղծագործական ծրագրերի բովանդակային հաշվետվությունը և կազմում եզրակացություններ,

3) առաջարկություն է ներկայացնում օտարերկրյա պետություններում ժամանակակից արվեստի ոլորտում մշակութային համագործակցության նպատակով ստեղծագործական խմբերի, անհատ կատարողների, շնորհալի երեխաների ու ստեղծագործողների հյուրախաղերի իրականացման, փառատոների, մրցույթների, վարպետության դասերի մասնակցության, ինչպես նաև՝ համապատասխան մասնագետների գործուղման վերաբերյալ,

4) առաջարկություն է ներկայացնում օտարերկրյա պետություններում գրքի և գրահրատարակչության ոլորտում մշակութային համագործակցության

նպատակով գրքի միջազգային փառատոներին և տոնավաճառներին Հայաստանի և հայ գրողների ու թարգմանիչների, ինչպես նաև գրահրատարակչների մասնակցության, երիտասարդ գրողների և թարգմանիչների արվեստագիտական աշխատարանների մասնակցելու, ինչպես նաև՝ համապատասխան մասնագետների վերապատրաստումների գործուղման վերաբերյալ,

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հասարակական կազմակերպությունների հետ համատեղ աջակցում է ազգային փոքրամասնությունների (ներառյալ ազգային փոքրամասնությունների լեզվով հրատարակվող մամուլի հրատարակումը) մշակույթի հանրահռչկամանն ու տարածմանը նպաստող ծրագրերի մշակմանը,

6) իրականացնում է միջազգային և հանրապետական մրցույթներ, փառատոներ, ցուցահանդեսներ, ինչպես նաև գիտաժողովներ, համաժողովներ և այլ միջոցառումներ՝ ապահովելով դրանց կազմակերպումն ու անցկացումը,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հան-րապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում ընթերցանությունը խթանելու համար,

8) ապահովում է գրահրատարակչության ոլորտի պետական պատվերի տեղաբաշխման, դրա կատարման ընթացքի հսկողության, արդյունքների ընդունման գործընթացները և ստեղծում տվյալների շտեմարան,

9) զարգացնում է գրաքննադատությունը՝ աջակցելով գրական մամուլում հրապարակումներին և գրաքննադատներին դրամաշնորհային ծրագրերի միջոցով,

10) աջակցում է ցուցահանդեսների, տոնավաճառների, փառատոների, գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպմանը,

11) ըստ անհրաժեշտության՝ արձագանքում է զանգվածային լրատվության միջոցներով քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց հարցերին և բարձրացրած ահազանգերին,

12) ապահովում է գրողների ստեղծագործական կարողությունների լիարժեք դրսևորման համար նպաստավոր պայմաններ,

13) ապահովում է արտերկրի գրադարանների համալրումը հայագիտական և հայաթեմա օտարալեզու գրականությամբ,

14) իրականացնում է միջազգային հեղինակավոր մրցույթներում մրցանակների արժանացած և դրամական խրախուսման ծրագրի շահառու դարձած անձանց շտեմարանի վարումը/հաշվառումը, փաստաթղթերի ընդունումը, հանձնաժողովի նիստերի կազմակերպումը, համապատասխան արձանագրությունների կազմումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելու գործընթացը,

15) պարբերաբար ներկայացնում է հաշվետվություններ նախատեսված ծրագրերի և միջոցառումների կատարման ընթացքի մասին,

16) քննարկում է և ներկայացնում առաջարկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց գրությունների (դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը,

17) համակարգում է նախարարության համագործակցությունը ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական ու այլ կազմակերպությունների, ստեղծագործական միությունների հետ, նպաստում շփումների ստեղծմանն ու զարգացմանը,

18) Նախարարի, Նախարարի տեղակալների և Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ՝ կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունը,

19) ըստ անհրաժեշտության, ստեղծում է և վարում շտեմարաններ կինոարվեստի, գրահրատարակչության կերպարվեստի, երաժշտարվեստի, թատերարվեստի

ոլորտներում, ինչպես նաև մշակութային կրթության, արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցներում դասավանդող ատեստավորված մանկավարժների, պատվավոր կոչումների արժանացած արվեստի և մշակույթի գործիչների վերաբերյալ,

20) նախարարության կայքում տեղադրելու համար՝ պարբերաբար համակարգող նախարարի տեղակալին է ներկայացնում տեղեկույթ Ոլորտում ստեղծագործական ծրագրերի, միջոցառումների վերաբերյալ,

21) իրականացնում է օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

11. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

12. Վարչության գործունեությունը ղեկավարում և համակարգում է Վարչության պետը:

13. Վարչության և բաժինների ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժինների պետերը:

14. Վարչության պետը, բաժինների պետերը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

15. Վարչության պետի, բաժինների պետերի և աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիր-ների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

16. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորումներից.

1) Արվեստի և գրահրատարակչության ոլորտի քաղաքականության մշակման բաժին,

2) Արվեստի և գրահրատարակչության ոլորտի ծրագրերի իրականացման բաժին: